

Φασտაթოթերի կենտրոն Ախալքალაქում

Դժբախտաբար, Վրաստանում հողի կադաստրը դեռևս կարգավորված չէ, հազարավոր սեփականատերերն են մինչ օրս չգիտեն իրենց հողամասի իրական մակերեսը: Հողամասերի ճշգրիտ սահմանները չեն կարող որոշել, քանի որ հարակից տարածքները ծածկում են իրար, ինչը հաճախ հարեկանների միջև կոմի եւ դատական վեճերի պատճառ է դառնում: Այն հողերի մեծ մասն էլ, որոնք պաշտոնապես գրանցված են (առկա տվյալներով, ամբողջ տարածությունների 20% է գրանցված) սխալ է չափված: Ժամանակին, քաղաքացիները հողի սեփականության իրավունքը ստացան այնպես, որ դրա հետ չկար կադաստրային տվյալներ, ինչը հողերի հաշվառման ուղղությամբ մեծ թուրքիմացություններ ստեղծեց:



Նախագծի արդյունքում զբաղվեց 4 տեղացի
Նախագծի ընդհանուր րոշեն 37.500.00 լարի
Եվրամիության ֆինանսավորումը 25.250.00 լարի
Համաֆինանսավորումը 12.250.00 լարի



Այսպիսի դրության մեջ առաջ դրված քայլերից մեկն է Արարատ Հովաննեսյանի կողմից բացած փաստաթղթերի կենտրոնը: Նրա խոսքերով, ընկերությունների մեծամասնությունը հողը առանց գործիքների, գրասենյակից առանց դուրս գալու են չափում, ինչը առաջացնում է ծածկում եւ չի ստացվում ճշգրիտ գծագիր:

Զափման գործունեության մեջ մեծ նշանակություն ունի որակյալ գործիքներ ունենալը, որոնք բաց եւ փակ տարածություններում են կատարում չափման աշխատանքներ: Բարձրորակ չափման սարքը ձեռք բերել Արարատ Հովաննեսյանը եւ նրա գործընկերը կարողացան Եվրամիության ֆինանսական օգնությամբ եւ LAG-ի ակտիվ աջակցությամբ:

«LAG-ի անդամները տեղացիներն են եւ նրանք հստակ գիտեին թե ինչ նշանակություն ունեն չափումների տեսանկյունից շրջանում որակյալ ծառայության գոյություն ունենալը: Նրանց օգնությամբ պատրաստեցինք դրամաշնորհային առաջարկը, ստացանք ֆինանսավորում, որի միջոցով ձեռք բերեցինք բարձր ճշգրտության գեոդեզիական GPS սարք: Նշված սարքը արտադրում է Շվեյցարական LEICA ընկերությունը եւ այն տվյալները վերցնելու ճշգրտությամբ աչքի է ընկնում» - ասում է փաստաթղթի կենտրոնի հիմնադիրը:



Դրամաշնորհի տեսքով ստացած գումարով գրասենյակային տեխնիկա էլ ձեռք բերեցին եւ այսօր ամբողջ ծանարաբեռնվածությամբ սպասարկում են շրջանի բնակչությանը: Չափում են գյուղատնտեսական հողերը, շենք-շինությունները եւ անցյալում սխալ կազմված գծագրերում էլ թերություններն էլ են ուղղում: Մակայն սա լրիվ ցանկը չէ այն ծառայությունների, որը կենտրոնը առաջարկում է տեղացիներին:

«Որոշեցինք, չափման աշխատանքներից բացի, լիարժեք ծառայություն մատեցել մեր հաճախորդներին: Այսինքն կա ամբողջական ցիկլ, որը սկսվում է կետերը վերցնելով եւ ավարտվում է հանրային ռեգիստրում անթերի քաղվածք ստանալով: Հաճախորդները միայն չափման գծագրերի համար են վճարում, իսկ ֆսացած ծառայությունները կատարում ենք անվճար» - ասում է Արարատ Հովանեսյանը:

Կենտրոնի աշխատակիցները շրջանի մասշտաբով, սեփական ավտոմեքենաներով են սպասարկում հաճախորդներին, ստեղծում են նրանց համար լիարժեք հարմարավետություն, համավարակի պայմաններում հանրային ռեգիստրում այցն էլ են պլանավորում եւ մինչեւ վերջ հսկում են անշարժ գույքի գրանցման գործընթացը:

Կենտրոնը բնակչության մեջ էլ արդեն բարձր վստահություն է վայելում: Իսկ գոհունակ եւ վստահությամբ տրամադրված հաճախորդը ցանկացած բիզնես գործունեության հաջողության նախապայմանն է:



Նախաձեռնությունը ֆինանսավորվել է Եվրամիությունը Վրաստանում գյուղի եւ գյուղատնտեսության զարգացման հարեւանական նախագծի՝ (ENPAD)-գյուղի զարգացման նոր մոտեցման նպաստումը նախագծի շրջանակներում:

Նախագիծը իրագործում է Վրաստանի հասարակական գործերի ինստիտուտը, գյուղատնտեսության եւ մասնագիտական ուսման բաժանմունքը (DRDVE/GIPA): Նախագծի համագործակիցներն են Մերսի Զորփսը, ELVA հասարակական ներգրավվածությունը եւ արեւմտյան Կորկի զարգացման գործընկերությունը:

Եվրամիությունը աջակցում է գյուղատնտեսությանը եւ գյուղի զարգացմանը Վրաստանում ENPARD-ի ծրագրի օգնությամբ: Ծրագիրը իրագործվում է 2013 թվականից ընդհանուր բյուջեով՝ 179,5 միլիոն եվրո: ENPARD-ի հիմնական նպատակը Վրաստանում գյուղի աղքատության հաղթահարումն է: Ծրագրի առաջին փուլի առաջնահերթությունն էր գյուղատնտեսության զարգացման նպաստումը, իսկ երկրորդ եւ երրորդ փուլի նպատակն է գյուղում ապրող մարդկանց տնտեսական զարգացման հնարավորությունների բարձրացումը: Հավելյալ տեղեկությունների համար տես վեբ-կայքը՝ www.enpard.ge.